**Արձանագրություն N 2**

## ԾՔ-ԳՀԾՁԲ-18/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ծաղկաձոր համայնքի կարիքների համար աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Ծաղկաձոր

13 օգոստոս 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Գ.Հայրապետյան/ԳԱՊ/

անդամներ՝ Վ.Ամիրխանյան /ԲԱ/

Է.Հովհաննիսյան /ԳԱ/

Ա.Մեսրոպյան /ԳԱ /

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

*Հանձնաժողովի անդամ Ն.Խաչատրյանը նիստին չի մասնակցում,քանի որ գտնվում է հերթական արձակուրդում:*

### 1. Տեղեկություններ ԾՔ-ԳՀԾՁԲ-18/17 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

---

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի օգոստոսի 13-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարան, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

### 2. ԾՔ-ԳՀԾՁԲ-18/17 ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

---

(Գ.Հայրապետյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| h/h | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | «Էրեբունի մաքրություն» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

### 3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

---

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ

3.1 «Էրեբունի մաքրություն» ՍՊԸ–ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Էրեբունի մաքրություն» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

## 4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Գ.Հայրապետյան)

4.1 Գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

| Չափաբաժին | Մասնակցի անվանումը | Նախահաշվային գինը | Առաջարկված գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Առաջարկված գինը |
|---|---|---|---|---|---|
| 1.Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ | «Էրեբունի մաքրություն» ՍՊԸ | 18000000 /տասնութ միլիոն/ | 17150000 /տասնյոթ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար/ | 0 /զրո/ | 17150000 /տասնյոթ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար/ |

**Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:**

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

## 5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ <<ԾՔ-ԳՀԾՁԲ-18/17>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էրեբունի մաքրություն» ՍՊԸ -ն, որպես բավարար գնահատված միակ մասնակից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

## 6. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և որակավորման չափանիշները հիմնավորող իրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Գ.Հայրապետյան)

6.1 Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի /այսուհետ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած

մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի առկայության վերաբերյալ 13.08.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարկելու օրվանից հաշված 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

## 7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

---

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված հարցման պատասխանի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ----------------------Գ.Հայրապետյան

անդամներ՝ ----------------------Լ.Ամիրխանյան

----------------------Է.Հովհաննիսյան

----------------------Ա.Մեսրոպյան

քարտուղար՝----------------------Ա.Ավետիսյան